ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2017 թվականի N 46

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել Սարգիս Հրաչիկի Սարիբեկյանի սեփականության իրավունքը Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 1-ին փողոց N 13 հասցեում գտնվող 006-019 կադաստրային ծածկագրի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.1 հեկտար հողամասի՝ նշված չափից 0.01 հա ավելի փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ, քանի որ.
   1) հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, և չեն փոխվել հողամասի պարագծային չափերը.
   2) հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. հունիսի 09

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2017 թվականի N 47

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ավագանու՝ 2014 թ. հուլիսի 11-ի N 19-Ն որոշման պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող հանդիսությունների սրահը 2017 թվականի հունիսի 19-ին օգտագործման տրամադրել համայնքի 4 փողոց 4 նրբանցք 1 շենք 2 հասցեի բնակիչ Հերիք Երիմյանին՝ ամուսնու՝ Հրաչիկ Երիմյանի քառասունքի արարողությունը կազմակերպելու նպատակով:
2. Հանձնարարել Հերիք Երիմյանին՝ վճարումը կատարել Նոր Արտամետ համայնքի ավագանու 2014 թ. հուլիսի 11-ի N 19-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափի համաձայն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. հունիսի 16

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2017 թվականի N 48

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Արսեն Մարգարյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2017 թվականի 3-րդ եռամսյակի՝ հուլիսի 01-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 01-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. հունիսի 16

գ. Նոր Արտամետ